

1

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
2020

Luys Lnyju®



ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐ.
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
ՁԵՎԱԶԱՓՆ ՈՒ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԶԵՎԱԶԱՓՆ ՈՒ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ.....	1
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ	
ԶԵՎԱԶԱՓԸ.....	5
2. ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ	7
2.1. Սլոժակիա.....	8
2.2. Բուլղարիա	11
2.3. Ուկրաինա	15
2.4. Մադագասկար	16
2.5. Ուզանդա	18
2.6. Ֆիլիպիններ.....	20
2.7. Ինդոնեզիա.....	21
3. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	22
3.1. Մասնագիտացված, թե՛ արտակարգ դատարան է հակակոռուպցիոն	
դատարանը.....	23
3.2. Մասնագիտացված դատարանի առավելություններն ու թերությունները.....	24
3.3. Նախատեսվող ֆինանսական ծախսերն ընդդեմ արդյունավետություն	28
3.4. Հակակոռուպցիոն դատարանի դատավորի աշխատավարձը.....	29
3.5. Հակակոռուպցիոն դատարանի դատավորին ներկայացվող պահանջները և	
նշանակման կարգը	33
3.6. Հակակոռուպցիոն դատարանները և արդար դատաբնության իրավունքը	34
4. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	35

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից 2020թ. հուլիսի 31-ին իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթ, (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ)¹, որով կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության շրջանակներում առաջարկվում է ստեղծել մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան:

Հակակոռուպցիոն դատարանի իրավասությանն են վերապահվելու ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա ներկայացրած դիմումների և հայցադիմումների հիման վրա քննվող գործերը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակակոռուպցիոն մասնագիտացված դատարաններ ստեղծվել են առավելապես աֆրիկյան (օրինակ՝ Քենիա, Ուգանդա, Կամերուն, Սենեգալ և այլն) և ասիական (օրինակ՝ Պակիստան, Աֆղանստան, Պաղեստին և այլն) տարածաշրջանների երկրներում: Նման դատարաններ ստեղծվել են նաև եվրոպական տարածաշրջանի առանձին երկրներում, ինչպիսիք են Խորվաթիան, Սլովակիան, Ալբանիան, Սերբիան, Ուկրաինան և Բուլղարիան: Հատկանշական է, որ նշված բոլոր երկրները կոռուպցիայի և իրավունքի գերակայության ցուցանիշներով գտնվում են միջինից ցածր մակարդակում: Ավելին, այս երկրները կոռուպցիայի եմ պայքարում առանձնահատուկ առաջընթաց չեն արձանագրել նաև հակակոռուպցիոն մասնագիտացված դատարաններ ներդնելուց հետո՝ փոխարենը առերեսվելով դրանց հետ կապված նոր խնդիրների հետ (սահմանադրականության հարցեր, պատշաճ կադրերի պակաս, քաղաքական ճնշումներ, դատավորների՝ կոռուպցիայի մեջ ներգրավվածություն և այլն):

Նախագծերի փաթեթում հակակոռուպցիոն դատարանը ներկայացվում է որպես մասնագիտացված դատարան: Սակայն դատարանին ընդդատյա խիստ սահմանափակ և որոշ դեպքերում՝ հատուկ սուբյեկտ ունեցող գործերի բնույթը, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը առաջ են բերում նման մասնագիտացման արդյունավետության վերաբերյալ կասկածներ: Չափազանց նեղ մասնագիտացումը լի է մի շարք վտանգներով, մասնավորապես, մի դեպքում՝

¹ Նախագծերը հասանելի են նախագծերի հրապարակման միասնական կայքում, <https://www.e-draft.am/projects/2644> (այցելվել է 21.08.2020թ.):

նման դատարանը կարող է տարանջատվել ընդհանուր դատական համակարգից՝ դառնալով ճնշումների թիրախ, իսկ մյուս դեպքում՝ կարող է առաջանալ թյուր պատկերացում, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորները «հատուկ» դատավորներ են:

Հակակոռուպցիոն դատարանի իրավասությանը վերապահվող չափազանց նեղ և որոշակի գործերի շրջանակը առաջ է բերում նաև այն հարցադրումը, թե արդյո՞ք հակակոռուպցիոն դատարանը իրավամբ մասնագիտացված դատարան է, թե՛ իր բնույթով առավել հարում է արտակարգ դատարան որակվելուն: Հակակոռուպցիոն դատարանի ձևավորումը ողջամիտ կասկած է առաջացնում նաև հակակոռուպցիոն դատավորների կողմից տվյալ գործերի վերաբերյալ արդեն իսկ կանխակալ վերաբերմունք ձևավորված լինելու մասին և արդար դատաքննության իրավունքի երաշխավորված լինելու տեսանկյունից:

Սլովակիայում հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը՝ արտակարգ դատարան լինելու հանգամանքով պայմանավորված, ճանաչվել է հակասահմանադրական, իսկ Ուկրաինայում Սահմանադրական դատարանի կողմից նույն հիմքով քննվում է նման մասնագիտացված դատարանի սահմանադրականության հարցը: Բուլղարիայում նույնպես մասնագիտացված դատարանի ստեղծումը առաջացրել է նմանաբնույթ քննադատություն:

Արդարադատության նախարարության կողմից ներկայացված նախնական հաշվարկների համաձայն՝ հակակոռուպցիոն դատարան ստեղծելու նպատակով 2021-2023թթ. համար անհրաժեշտ կլինի 6.358.529.900 ՀՀ դրամ: Նմանաբնույթ դատարաններ ներդրած երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս երկրներից որևէ մեկում նման դատարանների արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում ո՛չ գործնականում և ո՛չ էլ կոռուպցիայի դեմ պայքարի ցուցանիշներով ապացուցված չէ: Ֆինանսական զգալի միջոցների ծախսի համեմատությամբ նման մասնագիտացման դատարանի ոչ արդյունավետության օրինակ են Սլովակիան և Ուզանդան: Սլովակիայում հակակոռուպցիոն դատարանը գործնականում քննում է մանր կոռուպցիոն գործեր, ինչպիսին է, օրինակ՝ բժշկի դատապարտումը՝ 20 եվրո կաշառք ստանալու համար, իսկ Ուզանդայում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դատարանի կողմից քննվող 106 գործերից 57-ով պատճառված վնասը կազմել է 1.000 ԱՄՆ դոլարից քիչ գումար:

Հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար նախատեսվում է սահմանել մոտ երկու անգամ ավելի բարձր աշխատավարձ, քան նախատեսված է այլ դատարանների, այդ թվում՝ նաև նույն գործերը քննող վերաքննիչ և Վճռաբեկ դատարանի և նույնիսկ՝ Սահմանադրական դատարանի դատավորի համար, ինչը

Խնդրահարույց է Սահմանադրությամբ նախատեսված դատավորի կարգավիճակի միասնականության տեսանկյունից: Թեև առաջարկվող բարձր աշխատավարձը Նախագծերի փաթեթում հիմնավորվում է հակակոռուպցիոն դատարանի դատավորներից ակնկալվող բարձր պատասխանատվությամբ, այդուհանդերձ՝ հակակոռուպցիոն դատարանի դատավորին չեն ներկայացվում մասնագիտական փորձառության լրացուցիչ պահանջներ, ինչը համահունչ կլիներ այն պատասխանատվությանը և մասնագիտական որակներին, որոնց պետք է տիրապետի նման գործեր քննող դատավորը: Այս առումով մտահոգիչ է նաև հակակոռուպցիոն դատարանը անհրաժեշտ որակավորման կադրերով համալրելու խնդիրը: Բուլղարիայում հետագայում բացահայտվել է հակակոռուպցիոն դատարանի դատավորի կողմից նույնպես կոռուպցիայի մեջ ներգրավված լինելու դեպք:

«Լոյս» հիմնադրամի կողմից իրականացված վերլուծության մեջ ներկայացվում է Նախագծերի փաթեթով առաջարկվող հակակոռուպցիոն դատարանի ձևաչափը (մաս 1), ապա՝ համանման դատարաններ ունեցող երկրների փորձը (մաս 2), որից հետո քննարկման առարկա են դարձվում Նախագծերի փաթեթով առաջարկվող հակակոռուպցիոն դատարանի մոդելի և կարգավորումների խնդրահարույց կողմերը (մաս 3):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից 2020թ. հուլիսի 31-ին իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ)²:

Նախագծերի փաթեթը բխում է ՀՀ կառավարության կողմից վարվող 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունից³ (այսուհետ՝ Ռազմավարություն): Ռազմավարության շրջանակներում, ի թիվս այլոց, նախատեսվում է հակակոռուպցիոն մասնագիտացված երեք մարմինների ստեղծում՝

- Հակակոռուպցիոն քննչական կոմիտե,
- Գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչություն,
- Հակակոռուպցիոն դատարան:

Խնդրո առարկա Նախագծերի փաթեթի նպատակը վերը նշված մարմիններից հակակոռուպցիոն դատարանի ստեղծումն է:

Սույն վերլուծության առարկան հանրային քննարկման ներկայացված Նախագծերի փաթեթն է: Վերլուծության մեջ նախ ներկայացվում է Նախագծերի փաթեթով առաջարկվող հակակոռուպցիոն դատարանի ձևաչափը (մաս 1), ապա համանման դատարաններ ունեցող երկրների փորձը (մաս 2), որից հետո քննարկման առարկա են դարձվում Նախագծերի փաթեթով առաջարկվող հակակոռուպցիոն դատարանի մոդելի և կարգավորումների խնդրահարույց կողմերը (մաս 3):

² Նախագծերը հասանելի են նախագծերի հրապարակման միասնական կայքում, <https://www.e-draft.am/projects/2644> (այցելվել է 21.08.2020թ.):

³ Ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 2019թ. հոկտեմբերի 3-ին, ՀՀՊՏ 2019.10.09/70(1523).1, հոդ.915.11, N 1332-Ն:

1. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՁԵՎԱԶԱՓԸ

Հայաստանի Հանրապետության դատական համակարգի կառուցվածքը, կազմակերպման և գործունեության կարգի հիմունքները սահմանված են ՀՀ Սահմանադրության 7-րդ գլխով:

Սահմանադրությունը նախատեսում է եռաստիճան դատական համակարգ⁴

- 1) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ, ինչպես նաև վարչական դատարան և այլ մասնագիտացված դատարաններ,
- 2) վերաքննիչ դատարաններ,
- 3) Վճռաբեկ դատարան (հոդված 163, մաս 1):

Նախագծերի փաթեթով առաջարկվում է ստեղծել ևս մեկ մասնագիտացված դատարան, որին ենթակա կլինի ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների և 2020թ. ապրիլի 16-ին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի⁵ հիման վրա ներկայացրած դիմումների և հայցադիմումների հիման վրա քննվող գործերը:

Ըստ Նախագծերի փաթեթի՝ հակակոռուպցիոն դատարանը գործելու է առնվազն 25 դատավորի թվակազմով⁶, որից 20-ը՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացված, իսկ 5-ը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և փոխկապակցված գործերի մասնագիտացմամբ: Նախատեսվում է նաև ստեղծել վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան՝ կազմված երկու պալատից: Առաջինը՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության պալատը՝ առնվազն 6 դատավորի թվակազմով, և երկրորդը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և փոխկապակցված գործերով պալատը՝ առնվազն 4 դատավորի թվակազմով:

Քանի որ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա գործերի մի մասը քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործեր են («Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը նախատեսում է նման


⁴ Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը (Սահմանադրություն, հոդված 167, մաս 1):

⁵ Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2020 թ. ապրիլի 6-ին, ՀՀՊՏ 2020.05.13/50(1605) հոդ.580, ՀՕ-240-Ն:

⁶ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը Կառավարության համաձայնությամբ ավելացնում է առանձին դատարանների դատավորների թվակազմը, կրճատում է իր կողմից ավելացված դատավորների թվակազմը:

ընթացակարգ)⁷, իսկ մյուս մասը՝ քրեական գործեր, ուստի Վճռաբեկ դատարանի համապատասխանաբար քրեական, քաղաքացիական և վարչական պալատներում նախատեսվում է դատավորների թվակազմը ավելացնել երկուական դատավորով: Արդյունքում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կգործի 8 դատավորի թվակազմով, որոնք կհամարվեն քրեական, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացում ունեցող, իսկ քաղաքացիական և վարչական պալատը՝ 13 դատավորի թվակազմով, որոնք կհամարվեն միաժամանակ քաղաքացիական, այդ թվում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և փոխկապակցված գործերով քննության և վարչական մասնագիտացումներ ունեցող:

Հակակոռուպցիոն դադարանները ՀՀ դատական համակարգում



⁷ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 2:

2. ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ առավելապես ստեղծվել և գործում են ասիական և աֆրիկական տարածաշրջանների երկրներում, ինչպես նաև եվրոպական տարածաշրջանի որոշ երկրներում:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» համաշխարհային հակակոռուպցիոն կազմակերպության կողմից հրատարակված 2019թ. կոռուպցիայի ընկալման համաթվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված երկրները, որտեղ գործում են համանման հակակոռուպցիոն դատարաններ, 0-ից (բացարձակապես կոռումպացված) մինչև 100 (բացարձակապես մաքուր) սանդղակում գտնվում են հետևյալ դիրքերում⁸

- Ասիական տարածաշրջանի երկրները՝ Ֆիլիպիններ, Պակիստան, Ինդոնեզիա, Նեպալ, Բանգլադեշ, Աֆղանստան, Պաղեստին, Թաիլանդ, Մալազիա և Շրի Լանկա)՝ նվազագույնը 16-րդ (Աֆղանստան⁹) և առավելագույնը 53-րդ (Մալազիա¹⁰) սանդղակների միջակայքում:
- Աֆրիկայի տարածաշրջանի երկրները՝ Քենիա, Բուրունդի, Ուգանդա, Կամերուն, Սենեգալ, Բոթսվանա, Տանզանիա, Մադագասկար և Սիերա Լիոնե՝ նվազագույնը 19-րդ (Բուրունդի¹¹) և առավելագույնը՝ 61-րդ (Բոթսվանա¹²) սանդղակների միջակայքում:
- Եվրոպական տարածաշրջանի երկրները՝ Խորվաթիա, Սլովակիա, Բուլղարիա, Սերբիա, Ուկրաինա և Ալբանիա՝ նվազագույնը 30-րդ (Ուկրաինա¹³) և առավելագույնը 50-րդ (Սլովակիա¹⁴) սանդղակների միջակայքում:

⁸ Պետք է նկատի ունենալ, որ նմանատիպ դասակարգումները ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն կարող համարվել օբյեկտիվ ճշմարտությունն արտացոլող ցուցանիշներ: Transparency international the global coalition against corruption, Corruption Perceptions Index 2019: Frequently Asked Questions, why is the CPI based on perceptions?

https://images.transparencycdn.org/images/2019_CPI_SourceDescription_EN-converted-merged.pdf, (այցելվել է 21.08.2020թ.):

⁹ <https://www.transparency.org/en/cpi/2019/results/afg>. (այցելվել է 21.08.2020թ.):

¹⁰ <https://www.transparency.org/en/cpi/2019/results/mys>. (այցելվել է 21.08.2020թ.):

¹¹ <https://www.transparency.org/en/cpi/2019/results/bdi>. (այցելվել է 21.08.2020թ.):

¹² <https://www.transparency.org/en/cpi/2019/results/bwa>. (այցելվել է 21.08.2020թ.):

¹³ <https://www.transparency.org/en/cpi/2019/results/ukr>. (այցելվել է 21.08.2020թ.):

¹⁴ <https://www.transparency.org/en/cpi/2019/results/svk>. (այցելվել է 21.08.2020թ.):

Համեմատության համար նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է 42-րդ դիրքում¹⁵:

Ստորև ներկայացվում է վերը նշված երկրներից միայն մի մասի փորձը: Երկրների ընտրությունը կատարվել է, առաջին հերթին, հաշվի առնելով երկրների իրավական համակարգի, իրավական մշակույթի, ինչպես նաև ցուցանիշներով Հայաստանի Հանրապետությանը մոտ լինելու հանգամանքը: Միջազգային փորձը համակողմանի ներկայացնելու նպատակով ներկայացվում է նաև ասիական և աֆրիկական տարածաշրջանների որոշ երկրների փորձի ուսումնասիրություն:

2.1 Սլովակիա

ա) Հակակոռուպցիոն դատարանի ձևաչափը

Սլովակիայում հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանը ստեղծվել է 2003թ. և սկզբնապես կոչվել է Հատուկ դատարան: Դատարանին ընդդատյա են եղել կազմակերպված հանցավորության և կոռուպցիոն բնույթի գործերը:

2009թ. Սլովակիայի Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց Հատուկ դատարանի ստեղծումը: Խորհրդարանը, սակայն, կարճ ժամանակահատվածում, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի դիտարկումները, ինչպես նաև կատարելով լրացուցիչ փոփոխություններ, ընդունեց նոր օրենք¹⁶, որով ստեղծվեց մասնագիտացված հակակոռուպցիոն Հատուկ քրեական դատարանը: Հատուկ քրեական դատարանին, ի հավելումն վերոհիշյալ գործերի, ընդդատյա են նաև այլ ծանր հանցագործություններ, ինչպիսին է, օրինակ՝ դիտավորյալ սպանությունը¹⁷:

Հատուկ քրեական դատարանը կազմված է 13 դատավորից, ներառյալ նախագահը: Պարզ գործերը լսվում են միանձնյա կարգով, առավել բարդ գործերը՝ 3 դատավորի կազմով: Դատավորների նշանակման և ազատման նկատմամբ հատուկ ընթացակարգեր սահմանված չեն: Դատավոր դառնալու համար թեկնածուները պետք է հանձնեն քննություն և իրենց անունները ներկայացնեն ընտրող հանձնաժողովին, որը ձևավորվում է Արդարադատության խորհրդի¹⁸

¹⁵ <https://www.transparency.org/en/cpi/2019/results/arm>, (այցելվել է 21.08.2020թ.):

¹⁶ Zákon č. 291/2009 Z. z. Zákon o špecializovanom trestnom súde a o zmene a doplnení niektorých zákonov, <https://www.epi.sk/zz/2009-291/znenie-20091101#Sum>, (այցելվել է 21.08.2020 թ.), Դատարանի կայքը՝ https://obcan.justice.sk/infosud/-/infosud/reg-detail/sud/sud_170, (այցելվել է 21.08.2020 թ.):

¹⁷ M. Stephenson, Specialised anti-corruption courts: Slovakia, Background and key features, Chr. Michelsen Institute, July 2016:2, <https://www.u4.no/publications/specialised-anti-corruption-courts-slovakia>, (այցելվել է 21.08.2020 թ.):

¹⁸ Արդարադատության խորհուրդը բաղկացած է 18 անդամից, որից 9-ը՝ դատավոր և 9-ը՝ իշխանության մյուս ճյուղերի կողմից նշանակված անդամներ:

կողմից: Հանձնաժողովը ներկայացնում է թեկնածուին, որը հաստատվում կամ մերժվում է Արդարադատության խորհրդի կողմից¹⁹:

բ) Սահմանադրականության խնդիրներ

Ինչպես արդեն նշվեց վերը, Սլովակիայի Սահմանադրական դատարանը 2009թ. հակասահմանադրական է ճանաչել այն օրենքը, որի հիման վրա կազմավորվել էր Հատուկ դատարանը: Դրա համար հիմք են հանդիսացել, մասնավորապես, հետևյալ հանգամանքները.

- Սահմանադրական դատարանը գտել է, որ Հատուկ դատարանը ունի «հիբրիդային» կառուցվածք՝ իր մեջ միավորելով ինչպես մասնագիտացված դատարաններին ներհատուկ, այնպես էլ՝ արտակարգ դատարաններին բնորոշ տարրեր: Նման կառուցվածքը և դատարանի ինտեգրումը Սլովակիայի դատական համակարգի մեջ հակասում է Սահմանադրությանը: Ըստ Սահմանադրական դատարանի՝ այն հանգամանքը, որ Սլովակիայի Ազգային անվտանգության ծառայությունը կարող էր դադարեցնել դատավորի պաշտոնավարումը՝ առանց կանխատեսելի կանոնների, ցանկացած պահին անվավեր ճանաչելով դատավորի բարեվարքության վկայականը (security clearance certificate), խախտում է իրավական որոշակիության սկզբունքը: Արդյունքում, Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ Հատուկ քրեական դատարանը ստեղծվել է այնպես, որ խախտվում է իշխանությունների բաժանման սկզբունքը՝ ի հաշիվ դատական իշխանության և ռազմա-գործադիրի, որով ոտնահարվում են նաև ժողովրդավարական պետության սկզբունքները և դատավորների անկախությունը²⁰:
- Երկրորդ խնդիրը վերաբերում էր Հատուկ դատարանի դատավորների վարձատրությանը, որն ավելի բարձր էր, քան մնացած դատավորներինը²¹: Սահմանադրական դատարանի որոշման կայացման պահին շրջանային դատարանի դատավորի ընդհանուր վարձատրությունը կազմել է 57.475-72.600 սլովակական կրոն, իսկ Հատուկ դատարանի դատավորների դեպքում՝ 199.526 սլովակական կրոն²² (բազային աշխատավարձ և գործառույթային հավելումներ)²³: Ամբողջական պատկեր կազմելու համար

¹⁹ M. Stephenson, նշվ. աշխ., Background and key features:

²⁰ B. Balogova, Slovakia to lose its Special Court, the Slovak Spectator, 25 May, 2009,

<https://spectator.sme.sk/c/20032786/slovakia-to-lose-its-special-court.html>, (այցելվել է 21.08.2020 թ.):

²¹ Նույն տեղում:

²² Սլովակիայի Սահմանադրական դատարանի որոշում թիվ PL. ÚS 17/08-238, էջ 53,

https://www.ustavnysud.sk/ussr-intranet-portlet/docDownload/99f2fbf5-86cf-452d-bc2b-e5056badacd4/Rozhodnutie%20-%20Rozhodnutie%20PL.%20%C3%9A%2017_08.pdf,

(այցելվել է 21.08.2020 թ.):

²³ Նույն տեղում, էջ 51:

հավելենք նաև, որ Հատուկ դատարանի դատավորի բազային աշխատավարձը հավասարեցված էր Գերագույն դատարանի դատավորի բազային աշխատավարձին²⁴:

Վարձատրության հետ կապված խնդիրն առնչվում էր այսպես կոչված «գործառուության հավելումներին», որոնք Հատուկ դատարանի դատավորների դեպքում կազմում էին Սլովակիայում միջին աշխատավարձի վեցապատիկը: Ընդ որում՝ հակասահմանադրական է ճանաչվել հենց հավելումների այդպիսի էական տարբերությունը, այլ ոչ թե ինքնին գաղափարը²⁵:

Պետք է նշել, սակայն, որ ներկայումս ևս Հատուկ քրեական դատարանի դատավորները շարունակում են ստանալ բարձր աշխատավարձ, սակայն տարբերությունը այժմ այնքան մեծ չէ²⁶: 2017թ. դրությամբ Հատուկ քրեական դատարանի դատավորի վարձատրությունը կազմում էր Սլովակիայի խորհրդարանի պատգամավորի աշխատավարձի 130 տոկոսը կամ 3,065.40 եվրո²⁷: Համեմատության համար՝ նորանշանակ դատավորի աշխատավարձը կազմում է պատգամավորի վարձատրության 90 տոկոսը²⁸:

գ) Դատարանի արդյունավետությունը

Հատուկ քրեական դատարանի գործունեությունը ոչ միանշանակ գնահատականների է արժանացել: Մասնավորապես, քննադատները նշում են, որ դատարանը հիմնականում քննում է կոռուպցիոն մանր գործեր, ինչպիսին է բժշկի դատապարտումը՝ 20 եվրո կաշառք ստանալու համար: Ըստ քննադատների՝ լուրջ կոռուպցիոն գործերի պակասը հարցականի տակ է դնում դատարանի նկատմամբ հասարակական վստահությունը և դատարանի գործունեության համար այդչափ մեծ ֆինանսական միջոցներ հատկացնելու նպատակահարմարությունը: Քննադատության մյուս թիրախը փոխկապակցված է նախորդ խնդրին. քննադատները պնդում են, որ քննելով կոռուպցիոն մանր գործեր՝ դատարանը

²⁴ JUDr. Ivetta MACEJKOVÁ, Ešterazk Špeciálnemusúdu, Ústavný súd Slovenskej republiky, էջ 12, https://www.ustavnysud.sk/documents/10182/992164/Este_raz_k_specialnemu_sudu_1.pdf/dffd56be-97c1-436d-8d2a-495dcf31cd45, (այցելվել է 21.08.2020 թ.):

²⁵ JUDr. Ivetta MACEJKOVÁ, նշվ. աշխ., էջ 11:

²⁶ M. Stephenson, նշվ. աշխ., Special employment conditions:

²⁷ GRECO, Fourth evaluation round, Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors, evaluation report: Slovak Republic, Conditions of service, paras. 76, 6 November 2014, Greco Eval IV Rep (2013) 2E, <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806ca488>, (այցելվել է 21.08.2020թ.):

²⁸ CEPEJ, Council of Europe, Report: efficiency and quality of the Slovak judicial system, assessment and recommendations on the basis of CEPEJ tools, November 2017, CEPEJ-COOP(2017)14, Remuneration of judges, <https://rm.coe.int/slovakia-assessment-report-on-efficiency-and-quality-of-the-slovak-jud/16807915c9>, (այցելվել է 21.08.2020թ.):

բարելավում է գործերի վիճակագրությունը՝ քողարկելով սեփական անարդյունավետությունը²⁹:

Դատարանի արդյունավետության հետ կապված խնդիրները արձանագրել է նաև Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբը (այսուհետ՝ նաև ԳՐԵԿՈ): Իր զեկույցում ԳՐԵԿՈ-ն անդրադառնում է Սլովակիայի շինարարության նախարարի և տարածքային զարգացման նախարարի դատապարտմանը, որոնց գործը քննել էր Հատուկ քրեական դատարանը: Ձեկույցում արձանագրվում է, որ թեև նախարարները պատասխանատվության են ենթարկվել, այնուամենայնիվ, դրա համար պահանջվել է ընդհանուր առմամբ 10 տարի՝ ներառյալ մինչդատական վարույթի ժամանակահատվածը: Մեկ այլ կոռուպցիոն գործ, որտեղ ներգրավված են հայտնի քաղաքական գործիչներ, այդ թվում՝ կառավարությունից, քննվում է 2011-ից ի վեր և դեռևս չի ստացել իր հանգուցալուծումը: Մեկ այլ կոռուպցիոն գործով դատապարտվել է վարչապետի խորհրդականը և մեկ այլ պաշտոնյա: Ընդ որում՝ հանցագործությունը կատարվել է 2011-ին, իսկ հանցագործներին դատապարտող դատավճիռը ուժի մեջ է մտել 2015թ. հունիսի 18-ին: Ձեկույցում արված դիտողություններից բխում է նաև, որ կոռուպցիայի դեմ պայքարի որակի բարձրացման համար բավարար չէ միայն մասնագիտացված դատարանների ստեղծումը, այլ կարևորվում է նաև ամբողջ իրավապահ մարմինների աշխատանքի որակը³⁰ և հատկապես՝ մասնագիտացված հետաքննող մարմինների պատշաճ գործունեությունը³¹:

2.2. Բուլղարիա

Բուլղարիայում կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով 2012թ. ստեղծվել է Հատուկ քրեական դատարան, որին, բացի կոռուպցիոն բնույթի գործերից, ընդդատյա են նաև կազմակերպված հանցավորության վերաբերյալ գործերի քննությունը³²: Հատուկ քրեական դատարանի ստեղծումը ողջունվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից³³:

²⁹ M. Stephenson, նշվ. աշխ., Scope of appropriate jurisdiction:

³⁰ GRECO, Fifth evaluation round, Preventing corruption and promoting integrity in central governments (top executive functions) and law enforcement agencies, evaluation report: Slovak Republic, Criminal proceedings and immunities, Criminal proceedings and immunities, paras. 145-147, 22 August 2019, GrecoEval5Rep(2018)9, <https://rm.coe.int/grecoeval5rep-2018-9-final-eng-slovakrep-public/168096d061>, (այցելվել է 21.08.2020թ.):

³¹ M. Stephenson, S. A. Schütte, Specialised anti-corruption courts, A comparative mapping, Chr. Michelsen Institute, December 2016 No 7, էջ 25, <https://www.u4.no/publications/specialised-anti-corruption-courts-a-comparative-mapping>, (այցելվել է 21.08.2020թ.):

³² Նույն տեղում, էջ 8 և 23:

³³ Report from the Commission to the European parliament and the Council on progress in Bulgaria under the Cooperation and Verification Mechanism, European Commission, 13.11.2018, Benchmark Two: Legal Framework, էջ 4, Strasbourg, COM(2018) 850 final,

Բուլղարիայում Հատուկ քրեական դատարանի արդյունավետության վերաբերյալ առկա է սահմանափակ տեղեկատվություն, ուստի սույն վերլուծության շրջանակներում ստիպված ենք մեծապես հենվել տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված գնահատողական ցուցանիշների վրա:

Կոռուպցիայի ընկալման համաթվի համաձայն՝ 2012թ. Բուլղարիան զբաղեցնում էր 75-րդ հորիզոնականը՝ 198 երկրների շարքում³⁴, իսկ 2019թ. դրությամբ՝ 74-րդ հորիզոնականը³⁵: Նշված ցուցանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս առնվազն այդ մակարդակում պնդել, որ Հատուկ քրեական դատարանի ստեղծմանը հաջորդող տարիների ընթացքում Բուլղարիան էական առաջընթաց չի գրանցել կոռուպցիայի ընկալման հարցում:

Շեռաքրքրական է նաև «World Justice Project» միջազգային կազմակերպության կողմից հրապարակվող «Օրենքի գերակայության համաթիվը»³⁶: Համաթիվը ցույց է տալիս և՛ պետության համախառն արդյունքը, և՛ ներկայացնում է առանձին ոլորտներում առկա վիճակը: Առանձին ոլորտներում օրենքի գերակայությունը ցույց տվող ցուցանիշները կոչվում են գործոններ: Խնդրո առարկայի համար առանձնացրել ենք վերաբերելի երկու գործոն՝ կոռուպցիայի բացակայություն³⁷ և քրեական արդարադատություն³⁸: Կոռուպցիայի բացակայություն գործոնի դասակարգմամբ Բուլղարիան 2015թ. զբաղեցնում էր 71-րդ հորիզոնականը՝ 102 երկրների շարքում: 2020թ. Բուլղարիան զբաղեցրել է նույն հորիզոնականը, սակայն 128 երկրների շարքում³⁹: Արձանագրենք նաև, որ թեև հորիզոնականները մնացել են նույնը, բայց նշված միջակայքում Բուլղարիան գրանցել է որոշակի ոչ էական առաջընթաց⁴⁰:

https://ec.europa.eu/info/sites/info/files/progress-report-bulgaria-com-2018-850_en.pdf, (այցելվել է 21.08.2020թ.):

³⁴<https://www.transparency.org/en/cpi/2012/results/bgr>, (այցելվել է 21.08.2020թ.):

³⁵ Դասակարգվող երկրների թիվը չի փոփոխվել՝

<https://www.transparency.org/en/cpi/2019/results/bgr>, (այցելվել է 21.08.2020թ.):

³⁶<https://worldjusticeproject.org/rule-of-law-index/>, (այցելվել է 21.08.2020թ.):

³⁷ Գործոնը ներառում է կոռուպցիայի դրսևորման երեք տեսակ՝ կաշառք, հանրային կամ մասավոր շահեր ներկայացնող սուբյեկտների կողմից անհարկի ազդեցություն, պետական միջոցների և այլ ռեսուրսների յուրացում, <https://worldjusticeproject.org/rule-of-law-index/factors/2015/Bulgaria/Absence%20of%20Corruption/>, (այցելվել է 21.08.2020թ.):

³⁸ Գործոնը գնահատում է քրեական արդարադատության ընդհանուր համակարգը, <https://worldjusticeproject.org/rule-of-law-index/factors/2020/Bulgaria/Criminal%20Justice/>, (այցելվել է 21.08.2020թ.):

³⁹ <https://worldjusticeproject.org/rule-of-law-index/factors/2020/Bulgaria/Absence%20of%20Corruption>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁴⁰ Absence of Corruption for Bulgaria, 2015-2020, <https://worldjusticeproject.org/rule-of-law-index/country/2020/Bulgaria/Absence%20of%20Corruption>, (այցելվել է 21.08.2020թ.):

Պետք է ուշադրություն դարձնել նաև Քրեական արդարադատության գործոնի արձանագրած ցուցանիշներին: Այս գործոնով 2015թ. Բուլղարիան զբաղեցնում էր 50-րդ հորիզոնականը՝ 102 պետությունների շարքում⁴¹, իսկ 2020թ.՝ 61-րդը, 128 երկրների շարքում: Թեև հորիզոնականների առումով տեղի է ունեցել դիրքի վատթարացում, այնուամենայնիվ 2015թ. համեմատ Բուլղարիան ունեցել է ցուցանիշների ոչ էական բարելավում⁴²: Հորիզոնականի տարբերությունը, թերևս, պայմանավորված է համաթվում նոր երկրներ ներառելով: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև գործոնում ներառված 8.6 ցուցիչը, որը ցույց է տալիս, թե արդյո՞ք քրեական արդարադատության համակարգը անկախ է գործադիր իշխանությունից կամ քաղաքական ազդեցություններից⁴³: Այս ցուցիչով 2020թ. Բուլղարիան 128 երկրների շարքում զբաղեցրել է 82-րդ հորիզոնականը: Նման ցուցանիշը, անկասկած, մտահոգվելու տեղիք է տալիս և ցույց է տալիս քրեական արդարադատության ընդհանուր վիճակը: Քրեական արդարադատության արդյունավետության մասին է խոսում նաև 8.1 ցուցիչը, որը գնահատում է քրեական հետապնդման մարմինների արդյունավետությունը, ներառյալ՝ կոռուպցիայից զերծ լինելը: Այս ցուցիչով Բուլղարիան զբաղեցնում է 82-րդ հորիզոնականը՝ 128 երկրից⁴⁴: Նշված ցուցիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն կոռուպցիոն հանցագործություններ քննող դատարանի ստեղծումը, թերևս, էական փոփոխություն չի առաջացրել:

Այնուամենայնիվ, Հատուկ քրեական դատարանի անկախությունը և արդյունավետությունը Բուլղարիայում քննադատության առարկա է դարձել: Այսպես, Բուլղարիայի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները քննադատել են դատարանի ստեղծումը՝ կարծիք հայտնելով, որ մասնագիտացված քրեական դատարանը մրցակցության մեջ է մտնում սովորական քրեական դատարանների հետ և փաստացի զուգահեռ դատական համակարգ է: Միաժամանակ, քննադատները նշել են, որ Հատուկ քրեական դատարանի միջոցով գործող իշխանությունը հաշվեհարդար է տեսնում իր ընդդիմախոսների հետ⁴⁵:

⁴¹ <https://worldjusticeproject.org/rule-of-law-index/factors/2015/Bulgaria/Criminal%20Justice/>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁴² Criminal Justice for Bulgaria, 2015-2020, <https://worldjusticeproject.org/rule-of-law-index/country/2020/Bulgaria/Criminal%20Justice/>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁴³ <https://worldjusticeproject.org/rule-of-law-index/factors/2020/Bulgaria/Criminal%20Justice/>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Dr. Radosveta Vassileva, Capturing Bulgaria's Justice System: The Homestretch, 9 Jan 2019, <https://verfassungsblog.de/capturing-bulgarias-justice-system-the-homestretch/>, (այցելվել է 21.08.2020թ.):

Դատարանի գործունեության թափանցիկության վերաբերյալ կասկածները հաստատվում են գործնականում: Այսպես, 2018թ. նոյեմբերի 28-ին Բուլղարիայի Գերագույն վերաքննիչ դատարանի նախագահ Լոզան Պոպովը քննության գործընթաց է հարուցել Վերաքննիչ հատուկ քրեական դատարանում չարաշահումների վերաբերյալ: Քննության արդյունքում պարզվել է, որ Վերաքննիչ քրեական դատարանը չեղարկել է ստորադաս Հատուկ քրեական դատարանի որոշումը՝ չունենալով նիստի արձանագրությունը, և նույնիսկ այն դեպքում, երբ դատավճիռը դեռևս ստորագրված չէր որոշումը կայացրած դատավորների կողմից⁴⁶:

Կոռուպցիայից զերծ չեն նաև Հատուկ քրեական դատարանի դատավորները: Մասնավորապես, կոռուպցիայի մեջ ներգրավված լինելու պատճառով Հատուկ քրեական դատարանի դատավոր Անդոն Միլատովին և նրա ընտանիքի անդամներին արգելվել է մուտք գործել ԱՄՆ⁴⁷:

Քննադատությունների պատճառ է դարձել նաև այն, որ Հատուկ քրեական դատարանն ունի մի շարք հատկանիշներ, որոնք հատուկ են արտակարգ դատարաններին, օրինակ, այն, որ դատարանին ընդդատյա են որոշակի պաշտոն զբաղեցնող անձանց կողմից կատարված հանցագործությունները (օրինակ՝ դատավորներ, պատգամավորներ և այլն): Որպես արտակարգ դատարանի օգտին փաստարկ է վկայակոչվում նաև այն, որ Հատուկ քրեական դատարանում վարույթի կանոնները տարբերվում են սովորական դատարանների վարույթից, ինչպես նաև այն, որ դատարանի ստեղծումը հիմնավորվել է «անհրաժեշտությամբ»⁴⁸:

Շեղանկային է նաև Հատուկ քրեական դատարանի գործունեության հաշվետվությունը: Հաշվետվությունից տեղեկանում ենք, որ դատարանի վարույթում գտնվող գործերի 99%-ը լուծվում է մինչև 3 ամիս ժամկետում: Թեև այս տվյալները տպավորիչ են, սակայն պետք է նշել, որ դրանց մեջ միայն մասամբ են ներառված բարդ գործերը⁴⁹: Նման պարագայում դժվար է եզրակացություններ անել դատարանի արդյունավետության մասին:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ United States Department of State, Press Statement, February 5, 2020, <https://www.state.gov/public-designation-due-to-involvement-in-significant-corruption-of-bulgarian-judge-andon-mitalov/>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Доклад за дейността на специализирания наказателен съд през 2019 година, էջ 11-12, <https://spns.justice.bg/bg/12747>, (այցելվել է 21.08.2020թ.):

2.3. Ուկրաինա

2018թ. հունիսի 7-ին Ուկրաինայի խորհրդարանը ընդունեց Բարձրագույն հակակոռուպցիոն դատարանի մասին օրենքը⁵⁰, որի հիման վրա 2019-ից Ուկրաինայում սկսեց գործել մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան: Ուկրաինայի դատական համակարգը եռաստիճան է՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ (այդ թվում մասնագիտացված՝ վարչական և առևտրային դատարաններ), վերաքննիչ դատարան և վճռաբեկ դատարան:

Հակակոռուպցիոն դատարանը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում այս համակարգում՝ հակակոռուպցիոն բնույթի գործերով, ըստ էության, փոխարինելով առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններին: Հակակոռուպցիոն դատարանը բաղկացած է 2 պալատից, որոնցից առաջինը՝ 29 դատավորի թվակազմով, հանդես է գալիս որպես առաջին ատյանի դատարան, իսկ երկրորդ պալատը՝ 11 դատավորի թվակազմով՝ որպես վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան: Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի վճիռները կարող են բողոքարկվել վճռաբեկ դատարանի քրեական պալատում:

Առանձնահատուկ կարգ է նախատեսված նաև հակակոռուպցիոն դատարանի դատավորի ընտրության համար: Հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար սահմանվում են մասնագիտական փորձառության ավելի բարձր չափանիշներ, ինչպես նաև այս գործընթացում մեծ դերակատարում է տրված Միջազգային փորձագետների հանրային խորհրդին⁵¹:

Միջազգային փորձագետների հանրային խորհուրդը կազմված է 6 անդամից, որոնք ընտրվում են Ուկրաինայի հետ հակակոռուպցիոն ոլորտում համագործակցող միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված թեկնածուներից: Միջազգային փորձագետների հանրային խորհրդի հիմնական առաքելությունն է ստուգել հակակոռուպցիոն դատարանի դատավորի թեկնածուի բարեվարքությունը: Միջազգային փորձագետների հանրային խորհուրդը վճռորոշ դեր ունի նաև դատավորի ընտրության գործընթացում:

Հաշվի առնելով Ուկրաինայի հակակոռուպցիոն դատարանի գործունեության կարճ ժամանակահատվածը՝ դժվար է հստակ եզրահանգումներ անել վերջինիս արդյունավետության վերաբերյալ: Ուշագրավ է, սակայն, այն հանգամանքը, որ 2020թ. հուլիսի 22-ին Ուկրաինայի խորհրդարանի 49 պատգամավորներ դիմում են ներկայացրել Սահմանադրական դատարան՝ վիճարկելով Բարձրագույն

⁵⁰ Law of Ukraine On the High Anti-Corruption Court, <https://drive.google.com/file/d/1hIb64jS42gBYjnRtrRSAJhZ3bW2x0aXO/view>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁵¹ Public Council of International Experts:

հակակոռուպցիոն դատարանի մասին օրենքի սահմանադրականությունը: Պատգամավորների հիմնական փաստարկն այն է, որ հակակոռուպցիոն դատարանը իր բնույթով ավելի շատ մոտ է արտակարգ դատարան լինելուն, քան մասնագիտացված:

2.4. Մադագասկար

Մադագասկարում հակակոռուպցիոն դատարանը⁵² սկսել է գործել 2018-ից⁵³: Դատարանին, բացի կոռուպցիոն բնույթի գործերից, ընդդատյա են նաև փողերի լվացման և ֆինանսական, տնտեսական բնույթի հանցագործությունների քննությունը⁵⁴: Դատարանի ստեղծումը պայմանավորված է եղել նախկինում կոռուպցիայի դեմ իրականացված միջոցառումների անարդյունավետությամբ: Մինչև հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը Մադագասկարի 6 նահանգային դատարաններում գործել է մասնագիտացված դատավորների և դատախազների խմբեր⁵⁵, որոնց վերապահված էր կոռուպցիոն գործերի քննությունը: Սակայն, ընդհանուր առմամբ, դատական համակարգը, այդ թվում՝ հակակոռուպցիոն նշված մարմինը, եղել են կոռումպացված և գործադիր իշխանության ազդեցության ներքո: Նշվածի մասին է վկայում նաև այն փաստը, որ կոռուպցիոն գործերով մասնագիտացված դատավորների կողմից քննված գործերի արդյունքում միայն 39 տոկոսի նկատմամբ է կայացվել մեղադրական դատական ակտ⁵⁶:

Հակակոռուպցիոն դատարանի ստեղծման հիմնական նախաձեռնողը եղել է Մադագասկարի հակակոռուպցիոն մասնագիտացված հետաքննող մարմինը՝ Անկախ հակակոռուպցիոն գրասենյակը⁵⁷, միջազգային դոնորների՝ Եվրոպական միության և Արժույթի միջազգային հիմնադրամի աջակցությամբ: Վերջիններս ֆինանսավորել են հակակոռուպցիոն դատարանի ստեղծման համար անհրաժեշտ ողջ գործընթացը⁵⁸ և իրենց տարբեր գործիքակազմերի (ֆինանսավորումը պայմանավորելով բարեփոխումների ընթացքով) միջոցով «ճնշում» են գործադրել կառավարության վրա, որը փորձում էր դանդաղեցնել բարեփոխումների ընթացքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանը գործունեության երկար պատմություն չունի, վերջինիս արդյունավետության վերաբերյալ հետևություններ անելը բարդ է: Այնուամենայնիվ, փորձագետների գնահատմամբ դատարանի

⁵² Pôle Anti-Corruption (PAC):

⁵³ F. Schatz, S. A. Schütte, Madagascar's specialised anti-corruption court: The quest to end impunity, Chr. Michelsen Institute, U4 Brief 2019:2, Main points, <https://www.u4.no/publications/madagascars-specialised-anti-corruption-court-the-quest-to-end-impunity.pdf>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁵⁴ Նույն տեղում, էջ 3:

⁵⁵ Chaîne Pénale Economique et Anti-Corruption (CPEAC):

⁵⁶ F. Schatz, S. A. Schütte, նշվ. աշխ., էջ 1:

⁵⁷ Bureau Indépendant Anti-Corruption (BIANCO):

⁵⁸ F. Schatz, S. A. Schütte, նշվ. աշխ. էջ 2:

ստեղծումից հետո արձանագրվել է որոշակի առաջընթաց: Այսպես, դատարանի ստեղծումից հետո 1-ին տարվա առաջին եռամսյակում քննվել է 3 գործ, իսկ 2-րդ և 3-րդ եռամսյակներում՝ համապատասխանաբար 14 և 21: Նույն համամասնությամբ աճել է նաև դատապարտվածների տոկոսը՝ 36%, 39%, 67%⁵⁹:

Չնայած գրանցված որոշակի ձեռքբերումներին, հակակոռուպցիոն դատարանի պոտենցիալ արդյունավետությունը վտանգված է այն բանից հետո, երբ 2018թ. ստեղծվեց Արդարության բարձր դատարանը: Բանն այն է, որ 2018թ. Սահմանադրական դատարանը պարտավորեցրեց հակակոռուպցիոն դատարանին իր վարույթում գտնվող բարձրաստիճան պաշտոնյաներին վերաբերող գործերը փոխանցել նոր ստեղծված Արդարության բարձր դատարանին, որի բացառիկ ընդդատությանն են այսուհետ պատկանելու բարձրաստիճան պաշտոնյաների վերաբերյալ գործերի քննությունը: Նորաստեղծ դատարանում ներկայացված են խորհրդարանի և գործադիրի ներկայացուցիչները, իսկ վերջինս իրավասու չէ քննել պաշտոնյայի նկատմամբ հարուցված գործը՝ առանց խորհրդարանի մեծամասնության համաձայնության: Նշված հանգամանքները իշխող քաղաքական ուժին ճնշում գործադրելու հնարավորություն են տալիս, ինչի պատճառով երկրում խաթարվել է հակակոռուպցիոն պայքարի ընթացքը⁶⁰:

Գործնականում խնդիր է առաջանում նաև անհրաժեշտ թվով դատավորներ հավաքագրելու հետ: Թեև հակակոռուպցիոն դատարանի դատավորների և աշխատակազմի վարձատրությունը 1,5-2 անգամ գերազանցում է սովորական դատարաններում սահմանվածին⁶¹, այնուամենայնիվ, մինչ այս պահը չի հաջողվել գտնել անհրաժեշտ թվով դատավորներ, որոնք կբավարարեին ներկայացվող մասնագիտական պահանջներին և կցանկանային զբաղեցնել դատավորի պաշտոնը: Կադրերի պակասի պատճառով դեռևս չեն կազմավորվել հակակոռուպցիոն ևս 5 դատարանները, որոնք պետք է գործեն նահանգների մայրաքաղաքներում⁶²:

Ի հավելումն նշված խնդիրների՝ հարցականի տակ է դրվել նաև դատարանի ֆինանսական անկախությունը: Թեև սկզբնապես հակակոռուպցիոն դատարանը ուներ իր սեփական բյուջեն և ինքնուրույն էր որոշում դրա օգտագործման ուղղությունները, այնուամենայնիվ, 2019թ. բյուջեով հակակոռուպցիոն դատարանի համար նախատեսվող հատկացումները ներառվել են արդարադատության նախարարության բյուջեում: Այս փոփոխությունը փաստացի վերացրել է

⁵⁹ Նույն տեղում, էջ 5:
⁶⁰ Նույն տեղում, էջ 6:
⁶¹ Նույն տեղում, էջ 5:
⁶² Նույն տեղում, էջ 6:

դատարանի անկախությունը և լծակ է դատարանի վրա ճնշում գործադրելու համար⁶³:

2.5. Ուզանդա

Ուզանդայում ստեղծվել է ոչ թե առանձին հակակոռուպցիոն դատարան, այլ առանձին պալատ՝ առաջին ատյանի Բարձր դատարանի կազմում⁶⁴, որը քննում է կոռուպցիոն և փոխկապակցված գործերը: Կայացված վճիռները կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարանում, որը սակայն մասնագիտացված չէ⁶⁵:

Առկա տվյալների համաձայն 2009-2015թթ. ընթացքում հակակոռուպցիոն պալատ մուտքագրվել է 1.071 գործ, որոնցից դատարանի կողմից քննվել է 822-ը, որի արդյունքում կայացվել է 288 մեղադրական դատավճիռ: Ընդ որում 2015թ. օգոստոսի դրությամբ 300 գործ դեռևս քննության փուլում էր⁶⁶: Հակակոռուպցիոն պալատի գնահատմամբ գործի մուտքագրումից մինչև վերջնական դատական ակտի կայացումը միջին հաշվով պահանջվում է 1 տարի: Այնուամենայնիվ, դատապարտվածների մեծ մասը վիճարկում է որոշումները վերաքննիչ դատարանում, ինչի արդյունքում ընդհանուր գործընթացը կարող է տևել տարիներ: Տվյալ իրավիճակը ստիպում է քրեական հետապնդում իրականացնող մարմիններին պահանջել մասնագիտացված վերաքննիչ դատարանի ստեղծում⁶⁷:

Քաղաքացիական հասարակության և մասնագիտական հանրության կողմից բարձրաձայնվում է հակակոռուպցիոն պալատի՝ ազդեցություններից զերծ չլինելու խնդիրը: Այսպես, «Հյուման Ռայթս Վոչ»⁶⁸ միջազգային կազմակերպության իրականացրած ուսումնասիրության արդյունքում մի շարք առաջարկներ էին ներկայացվել Ուզանդայի կառավարությանը, մասնավորապես՝

- դադարեցնել հակակոռուպցիոն պալատի գործունեության նկատմամբ միջամտությունները,
- իրականացնել բոլոր այն նշանակումները, որոնք անհրաժեշտ են արդարադատության համակարգի պատշաճ աշխատանքի համար: Արդարադատության համակարգի պաշտոնների թափուր թողնելու միջոցով, փաստորեն, խաթարվել է հակակոռուպցիոն պայքարի

⁶³ Նույն տեղում, էջ 7:

⁶⁴ Anti-Corruption Division կամ ACD:

⁶⁵ S. A. Schütte, Specialised anti-corruption courts: Uganda, Chr. Michelsen Institute, July 2016:5, Background and key features, <https://www.u4.no/publications/specialised-anti-corruption-courts-uganda.pdf>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁶⁶ Նույն տեղում, Efficiency:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Human Rights Watch:

ընթացքը⁶⁹: Օրինակ՝ ուսումնասիրության պահին ստորաբաժանման կազմում գործում էր 4 մագիստրատ և 1 դատավոր, չնայած պետք է լիներ 5 մագիստրատ և 3 դատավոր⁷⁰,

- ապահովել պաշտպանության միջոցներ կոռուպցիային առնչվող գործերում ներգրավված դատախազների, քննիչների և վկաների համար⁷¹:

Առանձին հարցեր է առաջացնում հակակոռուպցիոն պալատի գործունեության արդյունավետությունը: «Հյուսիս Ռայթս Վոթչի» փորձագետների կողմից ուսումնասիրվել է դատարանում քննված 88 գործ: Արդյունքում պարզվել է, որ կասկածյալների 68%-ը դատապարտվել է, սակայն դրանց մեծ մասը եղել է տեղական կառավարման մարմինների ցածրաստիճան աշխատակից: Գործով որպես կասկածյալ անցնող 106 անձանցից 65-ը եղել են տեղական կառավարման մարմինների աշխատողներ, իսկ նրանց կողմից կատարված հանցագործության ընթացքում ենթադրաբար ձեռք բերված գումարը միջին հաշվով կազմել է 1.300 ԱՄՆ դոլար⁷²: Որպես կասկածյալ ներգրավված տեղական կառավարման մարմինների 65 աշխատողներից 62-ը դատապարտվել են: Բարձրաստիճան պաշտոնյաներից միայն նախկին առողջապահության նախարարն է դատապարտվել, ընդ որում՝ նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է: Կասկածյալներից 57-ը հետապնդվել են 1.000 ԱՄՆ դոլարից պակաս գումար ստանալու համար: Կազմակերպության կողմից հետազոտության ներկայացման պահին մեղադրանք էր առաջադրվել ընդամենը յոթ նախարարի, որոնք բոլորն էլ հետագայում արդարացվել են: Ինչպես նշել է ուզանդացի փաստաբաններից մեկը, գործնականում պատասխանատվության են ենթարկվում մանր կոռուպցիոն գործերում ներգրավված անձինք, մինչդեռ խոշոր կոռուպցիոներները մնում են անպատիժ⁷³:

Ուզանդայում գերիշխող հանրային կարծիքն այն է, որ դատավորները և մագիստրատները կաշառք են վերցնում կաշառք տվողի օգտին շահավետ որոշում

⁶⁹ S. A. Schütte, նշվ. աշխ., էջ 24:

⁷⁰ Տարբերությունը նրանում է, որ Բարձր դատարանի հակակոռուպցիոն ստորաբաժանման դատավոր լինելու համար պահանջվում է 10 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև նրանում, որ դատավորները քննում են առավել բարդ գործեր: Տե՛ս S. A. Schütte, նշվ. աշխ., Endnote 2 և “As strong as its weakest link”, Stakeholders’ Perceptions of the Ugandan Legal and Institutional Anti-Corruption Framework, Transparency international Uganda, June 2015, էջ 28, <http://tiuganda.org/wp-content/uploads/Stakeholders-Perceptions-of-the-Uganda-Legal-and-Institutional-Anti-Corruption-framework.pdf>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁷¹ “Letting the Big Fish Swim” Failures to Prosecute High-Level Corruption in Uganda, Human Rightst Watch, Allard K. Lowenstein International Human Rights Clinic Yale Law School, October 2013, էջ 6, <https://www.hrw.org/report/2013/10/21/letting-big-fish-swim/failures-prosecute-high-level-corruption-uganda>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁷² Կասկածյալներից 57-ը հետապնդվել են 1.000 ԱՄՆ դոլարից պակաս գումարի համար:

⁷³ “Letting the Big Fish Swim”, Human Rightst Watch, էջ 36-37:

կայացնելու համար⁷⁴: Արձանագրենք նաև, որ վերջին շրջանում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ թեև Ուգանդայում գործում է 14 հակակոռուպցիոն մարմին⁷⁵ և Բարձր դատարանի հակակոռուպցիոն պալատը, այնուամենայնիվ, կոռուպցիան շարունակում է մնալ արդիական խնդիր: Այսպես, ուգանդացիների 78%-ը կարծում է, որ կառավարությունն արդյունավետ չի պայքարում կոռուպցիայի դեմ, իսկ 69%-ը պնդում է, որ կոռուպցիայի մակարդակը աճում է⁷⁶: Ամեն 5 ուգանդացիներից 2-ը կարծում են, որ ամենաբարձր պաշտոններ զբաղեցնող քաղաքական գործիչների մեծ մասը կամ բոլորը կոռումպացված են⁷⁷:

2.6. Ֆիլիպիններ

Ֆիլիպինների հակակոռուպցիոն դատարանը⁷⁸ համարվում է աշխարհի ամենահին նմանատիպ մասնագիտացված դատարանը, որը սկսել է գործել 1979 թվականից⁷⁹:

Ֆիլիպինների հակակոռուպցիոն դատարանին են ընդդատյա կոռուպցիայի դեմ պայքարի մասին օրենքով նախատեսված հանցագործությունների քննությունը, այն դեպքում, երբ գործում ներգրավված է բարձրաստիճան պաշտոնատար անձ կամ հանցագործությամբ պատճառված վնասի չափը մեծ է:

Այն դեպքերում, երբ վերը նշված պայմանները բացակայում են, գործն ընդդատյա է լինում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, իսկ արդեն որպես վերաքննիչ դատարան հանդես է գալիս հակակոռուպցիոն դատարանը: Հակակոռուպցիոն դատարանի կողմից կայացված դատական ակտերը բողոքարկվում են Բարձրագույն դատարան:

Հակակոռուպցիոն դատարանը կազմված է 3-ական դատավորից կազմված 7 պալատից: Գործերը քննվում են կոլեգիալ՝ 3 դատավորի կազմով: Այն դեպքում, երբ ինչ-որ պատճառով (առողջական խնդիր, շահերի բախում և այլն) 3

⁷⁴ “As strong as its weakest link”, Transparency international Uganda, էջ 28-29:

⁷⁵ Land and Corruption, A Stakeholders Guide in the Fight against Corruption in Uganda's land sector, Transparency international Uganda, December 2017, էջ 17, <http://tiuganda.org/wp-content/uploads/2018/11/Land-and-Corruption-hand-book.pdf>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁷⁶ Global Corruption Barometer Africa 2019, Citizens' views and experiences of corruption, Transparency international, էջ 58, https://images.transparencycdn.org/images/2019_GCB_Africa3.pdf, (այցելվել է 21.08.2020թ.):

⁷⁷ In whose interest? Political integrity and corruption in Africa, Transparency international, 11 July 2019, <https://www.transparency.org/en/news/political-corruption-and-political-integrity-in-africa>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁷⁸ Հակակոռուպցիոն դատարանի անգլերեն անվանումը՝ Sandiganbayan:

⁷⁹ Anti-corruption resource centre, Specialised anti-corruption courts: Philippines, July 2016, <https://www.u4.no/publications/specialised-anti-corruption-courts-philippines.pdf>, (այցելվել է 21.08.2020թ.):

դատավորներից մեկը չի կարողանում մասնակցել գործի քննությանը, ապա հակակոռուպցիոն դատարանի պալատներից մեկի դատավորը փոխարինում է վերջինիս:

Հակակոռուպցիոն դատարան ստեղծելու հիմնական պատճառներից մեկը կայանում է նրանում, որ Ֆիլիպիններում բարդ գործերի քննությունը կարող է տևել տարիներ և նույնիսկ տասնյակ տարիներ վերջնական դատական ակտ կայացվելու համար⁸⁰: Կոռուպցիոն բնույթի դատական գործերի քննության այդչափ երկար տևողության դեպքում կարող է խաթարվել հասարակության վստահությունը դատական և իրավապահ համակարգի նկատմամբ՝ այն առումով, որ պետությունը ի վիճակի չէ պատասխանատվության ենթարկել կոռումպացված պաշտոնյաներին:

Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը նպատակ ուներ մասնագիտացված դատարանի միջոցով ավելի կարճ ժամկետներում իրականացնել գործերի քննությունը, որը, սակայն, չհաջողվեց ամբողջությամբ իրականացնել: Հակակոռուպցիոն դատարանում գործի քննության տևողությունը՝ գործը դատարան մուտք լինելու պահից մինչև վերջնական դատական ակտի կայացումը, տարբեր է, սակայն, լինում են դեպքեր, երբ գործի քննությունը տևում է մինչև 7 տարի և որոշ դեպքերում էլ ավելի երկար⁸¹: Ահռելի է նաև այն գործերի քանակը, որն ուղարկվել է դատարան և պետք է դառնա դատական քննության առարկա. 2015թ. դրությամբ այդ գործերի քանակը կազմում էր շուրջ 3000⁸²:

Ինչպես նշում են փորձագետները, Ֆիլիպինների օրինակը ցույց տվեց, որ միայն հակակոռուպցիոն մասնագիտացված դատարան ունենալը բավարար չէ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար⁸³:

2.7. Ինդոնեզիա

Ինդոնեզիայում հակակոռուպցիոն դատարանները ստեղծվել են 2002թ. ընդունված օրենքի հիման վրա և սկսել են գործել 2004-ից: Նման դատարան ստեղծելու հիմնավորումը, կայանում էր նրանում, որ այդ ժամանակահատվածում

⁸⁰ Raul C. Pangalangan, “The Philippines’ Sandiganbayan: Anti-Graft Courts and the Illusion of Self-Contained Anti-Corruption Regimes”// in Andrew Harding, Penelope Nicholson (edt), *New Courts in Asia*, Routledge, 2010, գրութ 14:

⁸¹ Asian Development Bank, Report from the ADB Symposium on Challenges in Implementing Access to Justice Reforms (Manila, 2005), էջ 23–24, <https://www.adb.org/sites/default/files/publication/29684/challenges-implementing-access-justice.pdf>, (այցելվել է 21.08.2020թ.):

⁸² Sandiganbayan, “Statistics on Cases Filed, Pending and Disposed of as of September 30, 2015,” էջ 1, https://sb.judiciary.gov.ph/transp/stat/filed_pending_disposed_September_30_2015.pdf, (այցելվել է 21.08.2020թ.):

⁸³ Specialised anti-corruption courts: Philippines, նշվ. աշխ.:

ո՛չ իրավապահ մարմինները և ո՛չ էլ գործող դատական համակարգը վստահություն չէին վայելում և չէին կարող անաչառ ու արդյունավետ պայքարել կոռուպցիայի դեմ:

2014թ. տվյալներով Ինդոնեզիայի հակակոռուպցիոն դատարան է ուղարկվել շուրջ 600 գործ, որից 382-ի վերաբերյալ նույն տարում կայացվել է դատավճիռ, սակայն, դրանց մեծ մասը այնուհետև բողոքարկվել են⁸⁴:

Հակակոռուպցիոն դատարանի արդյունավետության վրա մեծապես ազդում է մարդկային ռեսուրսների անբավարարությունը: Համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ ներգրավելու տեսանկյունից խնդիր է առաջացնում մասնավոր ոլորտում իրավաբանին տրվող աշխատավարձի հետ համեմատած ոչ բարձր աշխատավարձը:

3. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծերի փաթեթով առաջարկվող հակակոռուպցիոն դատարանի ձևաչափը պարունակում է հայեցակարգային առումով մի շարք խնդրահարույց մոտեցումներ, որոնք առաջ են բերում մի կողմից՝ սահմանադրականության, մյուս կողմից՝ արդյունավետության և նպատակահարմարության առումով լուրջ կասկածներ: Սույն հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվում Նախագծերի փաթեթի առավել առանցքային խնդիրներին, մասնավորապես՝

- Արդյո՞ք առաջարկվող հակակոռուպցիոն դատարանը իր բնույթով մասնագիտացվա՞ծ, թե՞ արտակարգ դատարան է (ստորև՝ կետ 3.1).
- Մասնագիտացված դատարանի առավելությունները և թերությունները (ստորև՝ կետ 3.2).
- Հակակոռուպցիոն դատարանի համար նախատեսվող ֆինանսական ծախսերն ընդդեմ արդյունավետության (ստորև՝ կետ 3.3).
- Հակակոռուպցիոն դատարանի դատավորի աշխատավարձի սահմանադրականությունը (ստորև՝ կետ 3.4).
- Հակակոռուպցիոն դատարանի դատավորին ներկայացվող պահանջները և նշանակման ընթացակարգը (ստորև՝ կետ 3.5).
- Հակակոռուպցիոն դատարանի դատավորի անաչառությունը արդար դատաքննության իրավունքի համատեքստում (ստորև՝ կետ 3.6):

⁸⁴ Anti-corruption resource centre, Specialised anti-corruption courts: Indonesia, July 2016, <https://www.u4.no/publications/specialised-anti-corruption-courts-indonesia.pdf>. (այցելվել է 21.08.2020թ.):

3.1. Մասնագիտացված, թե՛ արտակարգ դատարան է հակակոռուպցիոն դատարանը

Նախագծերի փաթեթի հրապարակումից հետո հնչեցին կարծիքներ այն մասին, որ առաջարկվող հակակոռուպցիոն դատարանը ոչ թե մասնագիտացված, այլ ավելի շուտ՝ արտակարգ դատարան է: Նման հարցադրման համար հիմք է հանդիսանում, մասնավորապես, գործերի այն շրջանակը, որը վերապահվում է այս դատարանի իրավասությանը: Առաջին ատյանի հակակոռուպցիոն դատարանի 25 դատավորներից 20-ը քննելու են ՀՀ քրեական օրենսգրքից առանձնացված կոռուպցիոն բնույթի 29 հանցակազմեր⁸⁵, որոնց սուբյեկտը գրեթե ամբողջությամբ հատուկ է, այն է՝ պաշտոնատար անձը: Հակակոռուպցիոն դատարանը քննելու է նաև վերջերս ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործերը: Նշված օրենքի վերաբերյալ ինչպես քաղաքական ուժերի, այնպես էլ՝ մասնագիտական հանրության կարծիքը առավելապես քննադատական էր⁸⁶: Այն, մասնավորապես, դիտարկվել է մարդու սահմանադրական իրավունքների տեսանկյունից խնդրահարույց և գնահատվել որպես նախկին իշխանությունների դեմ հնարավոր քաղաքական հաշվեհարդարի գործիք:

Արտակարգ դատարանները, ինչպես ցույց է տալիս պատմությունը, մեծամասամբ ստեղծվել են քրեական գործերով: Արտակարգ դատարանները, որպես կանոն, ստեղծվում են ավտորիտար ռեժիմների պայմաններում, սովորաբար՝ ընթացիկ քաղաքական խնդիրները լուծելու նպատակով, որոնք ինչ-ինչ պատճառներով պետության դատական մարմիններն օգտագործելու միջոցով հնարավոր չի լինում լուծել: Արտակարգ դատարանների գործունեությունն իրականացվում է իշխանությունների բաժանման սկզբունքի խախտմամբ և ուղեկցվում է մարդու իրավունքների, արդարադատության հիմնական սկզբունքների, մասնավորապես՝ դատարանի անկախության, հրապարակայնության, մրցակցության, ամբաստանյալի պաշտպանության իրավունքի, օրինականության խախտումներով⁸⁷:

⁸⁵ 2020թ. օգոստոսի 21-ի դրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված է թվով 29 կոռուպցիոն բնույթի հանցակազմ:

⁸⁶ Լրամշակված դիտարկումներ Ազգային ժողով ներկայացված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, «Լույս» հիմնադրամ, հրապարակվել է 202 թ. մարտի 3-ին, <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=137>, (այցելվել է 21.08.2020թ.), մաս 3:

⁸⁷ Գ. Հարությունյան, Վ. Պողոսյան, Առաջաբան // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 913:

«Սահմանադրության 163-րդ հոդվածի երկրորդ մասով արգելվում է արտակարգ դատարանների ստեղծումը: Սակայն, ո՛չ «Օրենսդրությամբ և ո՛չ էլ Եվրոպայի խորհրդի որևէ փաստաթղթով չի տրվում արտակարգ դատարանի հստակ բնորոշումը»⁸⁸:

Այս առումով հետաքրքրական է Վենետիկի հանձնաժողովի գնահատականը Ուկրաինայի բարձրագույն հակակոռուպցիոն դատարանի շուրջ համանման վեճին, որի հետ կապված՝ հանձնաժողովը եզրահանգել էր, որ այն մասնագիտացված դատարան է, քանի որ՝

- չի ստեղծվում մեկ կամ մի քանի սահմանափակ գործեր քննելու համար, որի առկայությունը կարող էր վկայել արտակարգ դատարան լինելու հանգամանքը,
- չի քննելու պաշտոնատար անձանց վերաբերյալ բոլոր գործերը, այլ միայն կոռուպցիոն բնույթի գործեր, որոնք անմիջականորեն կապված են պաշտոնատար անձանց հետ,
- չունի որևէ արտակարգ լիազորություն կամ այնտեղ գործերը չեն քննվելու այլ առանձնահատուկ կարգով, քան քննվում են քրեական գործեր քննող այլ դատարաններում⁸⁹:

Սակայն, հարկ է նկատի ունենալ, որ ինչպես ներկայացվել է վերը՝ այլ երկրների փորձը ներկայացնելիս, օրինակ՝ Սլովակիայում արտակարգ լինելու հանգամանքով պայմանավորված նման դատարանի ստեղծումը ճանաչվել է հակասահմանադրական⁹⁰, իսկ Ուկրաինայում⁹¹ ներկայումս նույն հիմքով վիճարկվում է նման դատարանի ստեղծման սահմանադրականությունը: Բուլղարիայում⁹² ևս մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը արժանացել է քննադատությունների, մասնավորապես, կասկածի տակ է դրվել դատարանի մասնագիտացված լինելու հանգամանքը և այն դիտարկվել է որպես արտակարգ:

3.2. Մասնագիտացված դատարանի առավելություններն ու թերությունները

Դատարանների մասնագիտացումը արագ զարգացող միտում է ամբողջ աշխարհում: Նման միտումը պայմանավորված է օրենսդրության, ինչպես նաև դրա

⁸⁸Venice Commission Ukraine - Opinion on the Draft Law on Anticorruption Courts and on the Draft Law on Amendments to the Law on the Judicial System and the Status of Judges, adopted by the Venice Commission at its 112th Plenary Session, CDL-AD(2017)020, կետ 22:

⁸⁹ Նույն տեղում, կետ 17-29:

⁹⁰ Ավելի մանրամասն տե՛ս 2.1 կետում:

⁹¹ Ավելի մանրամասն տե՛ս 2.3 կետում:

⁹² Ավելի մանրամասն տե՛ս 2.6 կետում:

կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների բազմազան և բարդ լինելու հետ:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (այսուհետ նաև՝ ԵԴԽԽ), անդրադառնալով դատարանների մասնագիտացմանը, նշել է⁹³, որ մասնագիտացումը հաճախ առաջանում է իրավունքի ոլորտում փոփոխություններին համապատասխանելու անհրաժեշտությունից և ոչ թե միտումնավոր ընտրության արդյունք է: Նոր օրենսդրական ակտերի մշտական ընդունումը, լինի դա միջազգային, եվրոպական թե ներպետական իրավունքի ոլորտներում, կամ փոփոխվող նախադեպը և տեսությունը իրավական գիտությունը դարձնում են չափազանց ընդգրկուն և բարդ: Դատավորի համար դժվար է տիրապետել բոլոր այդ ոլորտներին: Մինչդեռ հասարակությունը և դատավարության կողմերն ավելի ու ավելի մեծ պահանջներ են առաջադրում դատարանների պրոֆեսիոնալիզմի և արդյունավետության առումներով: Դատավորների մասնագիտացումը կարող է ապահովել, որ նրանք տիրապետեն համապատասխան գիտելիքների և փորձառության իրենց իրավասության ոլորտում:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, անդրադառնալով մասնագիտացված դատարաններին, վեր է հանել դրանց մի շարք առավելություններ և թերություններ⁹⁴:

Առավելությունների շարքում, մասնավորապես, մատնանշվում է հետևյալը⁹⁵.

- Իրավական ոլորտի խոր իմացությունը կարող է դրական անդրադառնալ դատավորի ընդունած որոշումների որակի վրա: Նեղ մասնագետ դատավորներն առավել շատ փորձ են ձեռք բերում կոնկրետ ոլորտներում, ինչը կարող է իր հերթին նպաստել դատարանի հեղինակության բարձրացմանը:
- Մշտապես նույն տիպի գործերով զբաղվելու դեպքում դատավորների խմբին կարող է նպաստել դատական որոշումների հետևողականությանը, հետևաբար կարող է խթանել իրավական որոշակիությունը: Մասնագիտացումը կարող է օգնել դատավորներին՝ առավել լավ հասկանալու իրենց ներկայացված գործերի էությունը՝ լինի դա տեխնիկական, սոցիալական թե տնտեսական ոլորտներում, ուստի նաև

⁹³ Working Party of the CCJE, “Report of the 22nd Meeting.”:

⁹⁴ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, կարծիք թիվ 15 (2012), ընդունվել է ԵԴԽԽ 13-րդ լիագումար նիստի ժամանակ: Հայերեն տեքստը հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/no15-in-armenian-15-2012-/16808e64f0>:

⁹⁵ Նույն տեղում, կետ 9, 10, 11, 12 և 13:

գտնել լուծումներ, որոնք ավելի համապատասխան են այդ բնագավառներին:

- Նեղ մասնագետ դատավորները, որոնք գիտելիքներ ունեն իրավական գիտությունից դուրս, կարող են խթանել միջգիտակարգային⁹⁶ մոտեցումը քննարկման ենթակա խնդիրների առնչությամբ:
- Որոշակի իրավական ոլորտներում առավել խոր փորձագիտության միջոցով մասնագիտացումը կարող է նպաստել դատարանի արդյունավետության բարձրացմանը և գործերի կառավարմանը՝ հաշվի առնելով, որ դատարան ներկայացվող գործերի թիվը մշտապես աճում է:

Չնայած դատական մասնագիտացումը ունի մի շարք առավելություններ, սակայն այն պարունակում է նաև մի շարք վտանգներ: ԵԴԽԽ-ի կողմից վերը նշված փաստաթղթում, մասնավորապես, մատնանշվում են հետևյալ մի շարք հանգամանքները⁹⁷, որոնք արդիական են նաև հակակոռուպցիոն դատարանների պարագայում.

- Նեղ մասնագետ դատավորները կարող են տարանջատվել դատական ընդհանուր համակարգից:
- Դատավորները, որոնք նեղ մասնագիտացման հետևանքով ընդունում են միևնույն տեսակի հարցերի առնչությամբ որոշումներ, կարող են հակված լինել վերարտադրելու նախկին որոշումները, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ հասարակության պահանջներին համապատասխան նախադեպի զարգացմանը: Այս վտանգն առկա է նաև, երբ որոշակի ոլորտում որոշումները մշտապես ընդունվում են դատավորների միևնույն խմբի կողմից:
- Մասնագետ իրավաբանները հաճախ կիրառում են հասկացություններ, որոնք բնորոշ են իրենց ոլորտին և (հաճախ) անձանոթ են այլ իրավաբանների: Սա կարող է տարանջատել նյութական օրենքը և դատավարական իրավունքի նորմերը՝ առանձնացնելով նեղ մասնագետ դատավորներին այլ ոլորտների իրավական իրականություններից: Արդյունքում նրանք կարող են մեկուսանալ ընդհանուր սկզբունքներից և հիմնարար իրավունքներից: Նման տարանջատումը կարող է խաթարել իրավական որոշակիության սկզբունքը:
- Կարող է ստեղծվել նեղ մասնագիտացված դատավորների առկայության ակնկալիք, մինչդեռ դա գործնականում հնարավոր չլինի ապահովել: Մասնագիտացում հնարավոր է միայն այն դեպքում, երբ դատարանի կազմը բավարար մեծ է: Առավել փոքր դատարանների համար դժվար է

⁹⁶ Բնօրինակ տեքստում բառի անգլերեն լեզվով տարբերակը՝ multidisciplinary:

⁹⁷ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, կարծիք թիվ 15 (2012), կետ 14, 15, 16, 17, 18, 19 և 20:

մասնագիտացված պալատներ ունենալը, ինչը ստիպում է դատավորներին առավել ճկուն լինել և կարողանալ լուծել տարբեր ոլորտների հարցեր: Մինչդեռ դատավորների չափից նեղ մասնագիտացումը կարող է խոչընդոտել նման ճկունությանը:

- Որոշ դեպքերում դատավորների մասնագիտացումը վնասակար է դատական իշխանության ամբողջականության համար: Դա կարող է դատավորների մեջ այն տպավորությունը ստեղծել, որ նեղ մասնագիտական ոլորտներում փորձագիտությունն իրենց դնում է դատավորների առավել առանձնահատուկ խմբում⁹⁸, որը տարբեր է մյուսներից: Դա կարող է նաև լայն հանրության մեջ տպավորություն ստեղծել, որ կան «սուպերդատավորներ» կամ հակառակը՝ որ դատարանը բացառապես տեխնիկական մարմին է և առանձնանում է դատական համակարգից: Եվ հակառակը՝ հանրության մոտ կարող է տպավորություն ստեղծվել, որ դրանք ոչ բավարար մասնագիտացված, առավելապես տեխնիկական աշխատանք կատարող դատավորներ են՝ բացասաբար ազդելով այն դատարանների նկատմամբ հանրային վստահության վրա:
- Չափազանց նեղ մասնագիտացված դատարան հիմնելը կարող է առանձնացնել դատավորներին դատական համակարգի մնացած կազմից կամ կարող է նման տպավորություն ստեղծել: Նման դատավորները կարող են ենթարկվել դատավարության մասնակից կողմերի, նույն հետաքրքրություններով միավորված մարդկանց խմբերի և պետական այլ ուժերի կողմից ճնշումների:
- Իրավունքի նեղ ոլորտում դատավորների, փաստաբանների, դատախազների միջև խիստ նմանության վտանգը համատեղ վերապատրաստման դասընթացների ընթացքում, համաժողովներում կամ այլ հանդիպումներում մեծ է: Սա կարող է խաթարել դատական իշխանության անկախության և անաչառության մասին պատկերացումները: Այն նաև կարող է դատավորին ենթարկել գաղտնի ազդեցության, ուստի և որոշակի ուղղվածություն հաղորդել նրա որոշումներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակակոռուպցիոն դատարանի դեպքում կարող ենք ունենալ շատ նեղ մասնագիտացված դատարան, դա լի է մի շարք վտանգներով: Մասնավորապես, մի սցենարի դեպքում, հակակոռուպցիոն դատարանի դատավորները կարող են տարանջատվել դատական ընդհանուր համակարգից, որի արդյունքում կարող են թիրախավորվել և ենթարկվել ճնշումների, ինչպես դատավարության կողմերի, այնպես էլ պետության կողմից:

⁹⁸ Բնօրինակ տեքստում բառի անգլերեն լեզվով տարբերակը՝ elite group of judges:

Ասվաճի վառ օրինակ է Մադագասկարի⁹⁹ և Ուգանդայի¹⁰⁰ հակակոռուպցիոն դատարանների փորձը, որտեղ վերջիններս, ենթարկվելով ճնշումների գործադիր իշխանության կողմից, ի վիճակի չեն պատշաճ կերպով իրականացնել իրենց գործառույթները:

Մյուս դեպքում՝ հակակոռուպցիոն դատարանի մոդելը վտանգավոր է նաև դատական իշխանության ամբողջականության տեսանկյունից, քանի որ կարող է ստեղծել թյուր պատկերացում, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորները «հատուկ» դատավորներ են. նշվածի արդիականությունը ավելի է ընդգծվում՝ հաշվի առնելով հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար նախատեսված անհամեմատ բարձր աշխատավարձը¹⁰¹ և նշանակման այլ ընթացակարգը¹⁰²:

3.3. Նախատեսվող ֆինանսական ծախսերն ընդդեմ արդյունավետություն

Ուշադրության են արժանի հակակոռուպցիոն դատարանի ստեղծման համար նախատեսվող ֆինանսական ծախսերը:

Նախագծերի փաթեթին կից ներկայացված տեղեկանքում արդարադատության նախարարությունը 2021-2023թթ. համար նախատեսում է հետևյալ նախնական ծախսերը՝

Նպատակը	Գումարի չափը
Աշխատավարձ, կոմունալ, գրասենյակային ծախսեր և այլն	3.339.529.900 ՀՀ դրամ
Շենքային պայմաններ	2.800.000.000 ՀՀ դրամ
Դատարանների տեխնիկական հագեցվածություն	198.000.000 ՀՀ դրամ
Դատարանների տրանսպորտային հագեցվածություն	21.000.000 ՀՀ դրամ
2021-2023թթ. համար նախնական հաշվարկով ընդհանուր ծախսեր	6.358.529.900 ՀՀ դրամ¹⁰³

Նման ծախսեր նախատեսող Նախագծերի փաթեթը առնվազն պետք է պարունակի նման նեղ մասնագիտացում ունեցող դատարան ունենալու

⁹⁹ Ավելի մանրամասն տե՛ս 2.1 կետում:
¹⁰⁰ Ավելի մանրամասն տե՛ս 2.2 կետում:
¹⁰¹ Ավելի մանրամասն տե՛ս 3.4 կետում:
¹⁰² Ավելի մանրամասն տե՛ս 3.5 կետում:
¹⁰³ Մոտ 13 միլիոն ԱՄՆ դոլար:

անհրաժեշտության և արդյունավետության մասին առավել ծանրակշիռ ու մանրակրկիտ հիմնավորումներ, ինչպես նաև կարգավորման ազդեցության մանրամասն գնահատում¹⁰⁴: Խնդիրն այն է, որ նեղ մասնագիտացում ունեցող դատարանի համար այսչափ մեծ ֆինանսական ծախսեր նախատեսելը կարող է լինել ոչ արդարացված:

Ասվածի մասին է վկայում նաև այլ երկրների փորձի ուսումնասիրությունը, որը ցույց է տալիս, որ հետազոտված որևէ երկրում նման մասնագիտացված դատարանի ներդնումը չի արձանագրել կոռուպցիայի դեմ պայքարում էապես դրական արդյունքներ և բարելավել կոռուպցիայի դեմ պայքարի ցուցանիշները:

Նախատեսվող ծախսերի համեմատ նման դատարանի գործունեության աննպատակահարմարության և անարդյունավետության վառ օրինակ են Սլովակիայի և Ուգանդայի փորձառությունները: Առաջին դեպքում հակակոռուպցիոն դատարանը հիմնականում քննում է մանր կոռուպցիոն գործեր, ինչպիսին է, օրինակ՝ բժշկի դատապարտումը 20 եվրո կաշառք ստանալու համար, իսկ երկրորդ դեպքում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դատարանի կողմից քննվող 106 գործերից 57-ով պատճառված վնասը կազմել է 1.000 ԱՄՆ դոլարից քիչ գումար:

3.4. Հակակոռուպցիոն դատարանի դատավորի աշխատավարձը

Նախագծերի փաթեթով հակակոռուպցիոն դատարանի դատավորի աշխատավարձը գրեթե երկու անգամ բարձր է մյուս բոլոր դատարանների դատավորների, այդ թվում՝ նաև Սահմանադրական դատարանի դատավորի աշխատավարձից: Զավեշտալին նաև այն է, որ նման բարձր աշխատավարձի սկզբունքը Նախագծերի փաթեթում չի պահպանվում նույն գործերը վերանայման կարգով քննող վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորների պարագայում:

Այսպես, Նախագծերի փաթեթով հակակոռուպցիոն դատարանի դատավորի դեպքում աշխատավարձը կկազմի **1.124.380 ՀՀ դրամ** (17*66 140 ՀՀ դրամ)¹⁰⁵, իսկ դատարանի նախագահի դեպքում՝ **1.190.520 ՀՀ դրամ** (18*66 140 ՀՀ դրամ):

Համեմատության համար նշենք, որ օրինակ՝

¹⁰⁴ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1:

¹⁰⁵ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հիմնական աշխատավարձը հաշվարկվում է հետևյալ կարգով՝ օրենքով նախատեսված գործակցի և բազային աշխատավարձի (սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով) արտադրյալ:

- առաջին ատյանի, այդ թվում՝ վարչական դատարանի դատավորի աշխատավարձը կազմում է **661 400 ՀՀ դրամ** (10*66 140 ՀՀ դրամ),
- վերաքննիչ դատարանի դատավորի աշխատավարձը կազմում է **727 540 ՀՀ դրամ** (11*66 140 ՀՀ դրամ),
- Վճռաբեկ դատարանի դատավորի աշխատավարձը կազմում է **760 610 ՀՀ դրամ** (11.5*66 140 ՀՀ դրամ),
- Սահմանադրական դատարանի դատավորի աշխատավարձը կազմում է **793 680 ՀՀ դրամ** (12 * 66 140 ՀՀ դրամ):

Հարց է առաջանում, թե որքանով է նման կարգավորումը սահմանադրական:

Սահմանադրության 164-րդ հոդվածը ամրագրում է դատավորի կարգավիճակը և նրա անկախության երաշխիքները: Դատավորի անկախության և նրա կարգավիճակի կարևոր տարրերից է դատավորի աշխատավարձն ու նրա սոցիալական ապահովությունը: Ըստ այդմ՝ Սահմանադրությունը նախատեսել է, որ դատավորի աշխատավարձը պետք է սահմանվի օրենքով, իսկ որպես աշխատավարձի որոշման չափորոշիչներ հստակ ամրագրել է, որ դատավորի վարձատրությունը համապատասխանի նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն (ՀՀ Սահմանադրություն հոդված 164, մաս 10): Դատավորի բարձր կարգավիճակը որոշվում է պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց հետ հարաբերության և համեմատության մեջ: Իսկ դատավորի պատասխանատվությունը պայմանավորված է գործերի այն շրջանակով, որը վերապահված է լինելու համապատասխան դատարանի քննությանը: Ընդ որում, Սահմանադրությունը դատավորի վարձատրությունը պայմանավորում է վերը նշված երկու չափորոշիչների միաժամանակյա առկայությամբ:

Հետևաբար, հակակոռուպցիոն դատարանի դատավորների համար նախատեսված տարբերակվող բարձր աշխատավարձի պարագայում հարց է առաջանում, թե արդյո՞ք դա արդարացված է մի կողմից՝ հակակոռուպցիոն դատարանի դատավորի կարգավիճակի և մյուս կողմից՝ բարձր պատասխանատվությանը սահմանադրական պահանջների տեսանկյունից:

Կարգավիճակի առումով հնարավոր չէ պնդել, թե հակակոռուպցիոն դատարանի դատավորները գտնվում են ավելի բարձր կարգավիճակում, քան վերաքննիչ, վճռաբեկ և առավել ևս՝ Սահմանադրական դատարանի դատավորները: Այս մասին է վկայում նաև Հայաստանի դատական համակարգի կառուցվածքը, որը նախատեսված է Սահմանադրությամբ: Սահմանադրության 171-դ հոդվածի 1-ին մասը վճռաբեկ դատարանը բնորոշում է որպես ՀՀ

բարձրագույն դատական ատյան (բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, իսկ վերաքննիչ դատարանը սահմանվում է որպես առաջին ատյանի դատական ակտերը վերանայող ատյան (Սահմանադրություն, հոդված 172):

Ինչ վերաբերում է հակակոռուպցիոն դատարանի դատավորի պատասխանատվությանը, ապա հարցը պետք է դիտարկել այլ դատարանների դատավորների հետ համեմատության մեջ:

Ինչպես արդեն նշվեց, Սահմանադրությունը նախատեսում է եռաստիճան դատական համակարգ, որտեղ գործերի ըստ էության քննությունը տեղի է ունենում առաջին ատյանի դատարաններում: Վճռաբեկ դատարանը օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում նաև ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (Սահմանադրություն, հոդված 171, մաս 2): Նման կարգավորման տրամաբանությունը բխում է արդար դատաքննության, մասնավորապես՝ դրա անբաժանելի տարր հանդիսացող բողոքարկման իրավունքից: Այն հնարավորություն է տալիս, որպեսզի բացառվի ոչ իրավական կամ մարդու իրավունքները խախտող որևէ որոշման կայացման հնարավորությունը: Հետևաբար, վերադաս ատյանների վրա դրված է առավել մեծ պատասխանատվություն՝ հաշվի առնելով նրանց կողմից կայացված դատական ակտի հետագա վերանայման սահմանափակ հնարավորությունները կամ անբողոքարկելիությունն ընդհանրապես: Համապատասխանաբար, Դատական օրենսգրքով վերադաս դատարանի դատավորի մասնագիտական ունակություններին և որակներին նույնպես առաջադրվում են առավել խիստ և բարձր պահանջներ: Հաշվի առնելով վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների վերը նշված դերն ու կարգավիճակը՝ տարակուսելի և խնդրահարույց է առաջին ատյանի հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար ավելի բարձր աշխատավարձ նախատեսելը, քան նույն գործերը վերանայման կարգով քննող վերաքննիչ հակակոռուպցիոն և Վճռաբեկ դատարանի դատավորների համար:

Անկասկած, կոռուպցիայի դեմ պայքարը արդիական խնդիր է բոլոր պետությունների համար, քանի որ այն քայքայում է հասարակական վստահությունը, թուլացնում ժողովրդավարությունը, խոչընդոտում է տնտեսական զարգացումը, էլ ավելի է սրում անհավասարությունը, աղքատությունը, սոցիալական բաժանումն ու բնապահպանական ճգնաժամը¹⁰⁶: Հակակոռուպցիոն

¹⁰⁶ What is corruption? Transparency international, <https://www.transparency.org/en/what-is-corruption> (այցելվել է 31.08.2020):

դատարանի իրավասությանն են վերապահվելու ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված թվով 29 կոռուպցիոն բնույթի հանցագործությունների և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա ներկայացրած դիմումների և հայցադիմումների հիման վրա քննվող գործերը: Արդյունքում, առաջին դեպքում ունենք կոռուպցիոն բնույթի հանցագործությունների (օրինակ՝ կաշառք ստանալը, կաշառք տալը, պաշտոնեական լիազորությունները անցնելը և այլն), իսկ երկրորդ դեպքում՝ կոռուպցիոն և այլ հանցագործությունների արդյունքում ապօրինի ճանապարհով ստացված գույքի բռնագանձման գործերի քննություն, որոնց հանրային վտանգավորությունը, անկասկած, բարձր է:

Միաժամանակ, համեմատության համար նշենք, որ, օրինակ, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացմամբ դատավորին ընդդատյա է այնպիսի հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործությունների քննություն, ինչպիսիք են՝ մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործություն համարվող սպանությունը (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 104), հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն համարվող ահաբեկչությունը (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 217) կամ սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված իշխանությունը յուրացնելու (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 300) և սահմանադրական կարգը տապալելու (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 300. 1) հանցակազմերը:

Արդյունքում, համեմատության մեջ մի կողմից դնելով կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, իսկ մյուս կողմից՝ մարդու կյանքի կամ սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների հանրային վտանգավորությունը և նման գործերի քննության ժամանակ դատավորի պատասխանատվությունը, կարծում ենք, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորի պատասխանատվությունը, ակնհայտորեն, առնվազն ավելի բարձր չէ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ նման մասնագիտացված դատարանի դատավորի համար մնացած դատավորների համեմատությամբ անհամեմատ բարձր աշխատավարձ նախատեսելը խնդրահարույց է սահմանադրականության տեսանկյունից: Մասնավորապես, Սլովակիայում նման մասնագիտացված դատարանի սահմանադրականության վիճարկման հիմքերից մեկը դատավորների համար նախատեսված անհամաչափ բարձր աշխատավարձն էր:

Վերը նշվածը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության սկզբունքից, որի պահանջներից է, ի թիվս այլոց, նաև իշխանությունների կողմից պատճառաբանված և արդար որոշումների կայացումը¹⁰⁷:

3.5. Հակակոռուպցիոն դատարանի դատավորին ներկայացվող պահանջները և նշանակման կարգը

Դատավորի պատասխանատվությանը պետք է համապատասխան լինի ոչ միայն վերջինիս տրվող վարձատրությունը, այլև նրան ներկայացվող պահանջները¹⁰⁸:

Նախագծերի փաթեթով հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար մասնագիտական փորձառության որևէ այլ լրացուցիչ պահանջ չի ներկայացվում: Նման մոտեցումը առնվազն խնդրահարույց է այն առումով, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորի գործունեությունը գնահատելով չափազանց կարևոր և պատասխանատու՝ վերջինիս համար սահմանվում է անհամեմատ բարձր աշխատավարձ, բայց, միաժամանակ, նույն դատավորի համար չի ներկայացնում մասնագիտական փորձառության ավելի խիստ պահանջներ:

Միջազգային փորձը¹⁰⁹ նույնպես վկայում է, որ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար՝ ի տարբերություն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի, նախատեսվում է մասնագիտական փորձառության ավելի բարձր պահանջներ, ավելին՝ Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորումներում¹¹⁰ ևս արտացոլված է այդ մոտեցումը:

Հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար, ի տարբերություն, առաջին ատյանի դատարանի դատավորի՝ նախատեսված է նշանակման այլ

¹⁰⁷ Venice Commission, Rule of Law Checklist, adopted by the Venice Commission at its 106th Plenary Session, CDL-AD(2016)007, կետ 64:

¹⁰⁸ Դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները սահմանված են Սահմանադրության 165-րդ հոդվածով: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները, որի համաձայն՝ դատավոր կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը, միաժամանակ սահմանվում է, որ դատավորների թեկնածուների համար դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

¹⁰⁹ Ուկրաինայում հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար ներկայացվում է մասնագիտական փորձառության ավելի բարձր չափանիշներ:

¹¹⁰ Հիմնավորում «ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերի ընդունման, Ինդունեզիա և Բուլղարիա:

ընթացակարգ: Նախագծերի փաթեթը նախատեսում է, որ Բարձրագույն դատական խորհուրդը թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին կարող է ներգրավել փորձագետներ¹¹¹: Բարձրագույն դատական խորհուրդը կազմակերպում է հավակնորդների նախնական հարցազրույց, որի նպատակը փորձագետների կողմից հավակնորդին հարցեր տալու միջոցով¹¹² հավակնորդի վերաբերյալ կարծիքի պատրաստելը և Բարձրագույն դատական խորհրդին ներկայացնելն է:

Իհարկե, փորձագետների կարծիքը չի կարող ունենալ պարտադիր նշանակություն Բարձրագույն դատական խորհրդի համար, ինչը կլիներ հակասահմանադրական, քանի որ դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները կազմելը և հաստատելը, Բարձրագույն դատական խորհրդի բացառիկ լիազորություն է¹¹³: Հաշվի առնելով նշվածը՝ պարզ չէ՝ ի՞նչ նշանակություն է ունենալու փորձագետներին դատավորի նշանակման գործընթացում ներգրավվելը:

Հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար նշանակման այլ ընթացակարգ նախատեսելը, ինչպես նաև այդ ընթացակարգում փորձագետներ ներգրավվելը կարող է խնդրահարույց լինել Սահմանադրությամբ սահմանված դատավորի միասնական կարգավիճակի և դատավորի անկախության երաշխիքների տեսանկյունից:

3.6. Հակակոռուպցիոն դատարանները և արդար դատաքննության իրավունքը

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրիչներից է անաչառ դատարանի առկայությունը: Դատարանի անաչառության պահանջը ունի երկու առանձնահատկություն. առաջին՝ դատավորները չպետք է թույլ տան, որպեսզի իրենց կանխակալ կարծիքը ազդեցություն ունենա իրենց կողմից

¹¹¹ Փորձագետների ներգրավման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը: Որպես փորձագետ կարող են ներգրավվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող երեք անձ:

¹¹² Դատավոր դառնալու շարժառիթի ու ակնկալիքի, անձնական հատկանիշների (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, հաղորդակցման հմտություններ պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում, արդարամտություն, վերլուծական կարողություններ և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ), դատավորի վարքագծի կանոններին, շահերի բախմանը վերաբերող իրավիճակում ձեռնարկվելիք գործողությունների, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների առնչությամբ:

¹¹³ ՀՀ Սահմանադրություն հոդված 175, մաս 1, կետ 1:

կայացվող վճիռների վրա և երկրորդ՝ դատավորը պետք է ողջամիտ դիտորդին թվա անկողմնակալ¹¹⁴:

Այս համատեքստում որոշակի հարցադրումներ են առաջ գալիս հակակոռուպցիոն դատարանի դատավորի անաչառության վերաբերյալ: Նախ և առաջ, նման հարցադրման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորի թեկնածուներին նախօրոք հայտնի է գործերի այն հնարավոր շրջանակը, որը կարող է իրենց կողմից քննության առարկա դառնալ: Բազմիցս ամենաբարձր մակարդակներով հնչել են դիտարկումներ առ այն, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը նպատակ ունի «նախկինում թալանվածը» հետ բերելու: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորները ընտրվելու պահին արդեն իսկ ունեն որոշակի ձևավորված վերաբերմունք իրենց քննության առարկա հանդիսանալիք գործերի վերաբերյալ, ինչը ողջամիտ կասկած է առաջանում դատավորների անաչառության վերաբերյալ:

4. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակակոռուպցիոն մասնագիտացված դատարաններ ստեղծվել են առավելապես աֆրիկյան (օրինակ՝ Բենիա, Ուգանդա, Կամերուն, Սենեգալ և այլն) և ասիական (օրինակ՝ Պակիստան, Աֆղանստան, Պաղեստին և այլն) տարածաշրջանների երկրներում: Նման դատարաններ ստեղծվել են նաև եվրոպական տարածաշրջանի առանձին երկրներում, ինչպիսիք են Խորվաթիան, Սլովակիան, Ալբանիան, Սերբիան, Ուկրաինա և Բուլղարիան: Հատկանշական է, որ նշված բոլոր երկրները կոռուպցիայի և իրավունքի գերակայության ցուցանիշներով գտնվում են միջինից ցածր մակարդակում: Ավելին, այս երկրները կոռուպցիայի եմ պայքարում առանձնահատուկ առաջընթաց չեն արձանագրել նաև հակակոռուպցիոն մասնագիտացված դատարաններ ներդնելուց հետո՝ փոխարենը առերեսվելով դրանց հետ կապված նոր խնդիրների հետ (սահմանադրականության հարցեր, պատշաճ կադրերի պակաս, քաղաքական ճնշումներ, դատավորների՝ կոռուպցիայի մեջ ներգրավվածություն և այլն):
- Թեև Նախագծերի փաթեթով հակակոռուպցիոն դատարանը ներկայացվում է որպես մասնագիտացված դատարան, սակայն, այդ դատարանին ընդդատյա խիստ սահմանափակ և որոշ դեպքերում՝ հատուկ սուբյեկտ ունեցող գործերի շրջանակը, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը հիմք են

¹¹⁴ Legal Digest of International Fair Trial Rights, OSCE Office for Democratic Institutions and Human Rights, կետ 3.3.2 Impartiality of a tribunal (<https://www.osce.org/files/f/documents/1/f/94214.pdf>), այցելվել է 21.08.2020թ.:

տալիս կասկածի տալ դնելու վերջինիս մասնագիտացված լինելու հանգամանքը: Սլովակիայում հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը վերջինիս արտակարգ դատարան լինելու հանգամանքով պայմանավորված՝ ճանաչվել է հակասահմանադրական, իսկ Ուկրաինայում Սահմանադրական դատարանի կողմից ներկայումս նույն հանգամանքով պայմանավորված քննվում է նման մասնագիտացված դատարանի սահմանադրականության հարցը: Բուլղարիայում նույնպես նման մասնագիտացված դատարանի ստեղծումը առաջացրել է քննադատություն կրկին նման դատարանի ավելի շատ արտակարգ, քան մասնագիտացված լինելու հանգամանքով պայմանավորված:

- Հակակոռուպցիոն դատարանի խիստ սահմանափակ ընդդատության արդյունքում դատարանը դառնում է չափից դուրս նեղ մասնագիտացված, որն էլ իր հերթին լի է մի շարք վտանգներով: Շատ նեղ մասնագիտացման արդյունքում հակակոռուպցիոն դատարանի դատավորները կարող են տարանջատվել դատական ընդհանուր համակարգից, որի արդյունքում կարող են ենթարկվել ճնշումների՝ ինչպես դատավարության կողմերի, այնպես էլ պետության կողմից: Ասվածի մասին է վկայում նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը, մասնավորապես Մադագասկարի և Ուգանդայի դեպքում, երբ նման դատարանները, լինելով գործադիր իշխանության ազդեցության ներքո, փաստացի ձախողել են կոռուպցիայի դեմ պայքարը: Դատարանի շատ նեղ մասնագիտացումը վտանգավոր է նաև դատական իշխանության ամբողջականության տեսանկյունից, քանի որ կարող է ստեղծվել թյուր պատկերացում հակակոռուպցիոն դատարանի դատավորների «հատուկ» կարգավիճակի վերաբերյալ: Նախագծերի փաթեթով հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար նշանակման այլ ընթացակարգ, ինչպես նաև անհամեմատ ավելի բարձր աշխատավարձ նախատեսելը գործնականում նշված խնդիրները դարձնում են առավել արդիական:
- Հաշվի առնելով միջազգային փորձը, որն առնվազն չի վկայում նման դատարանների արդյունավետության մասին, ՀՀ արդարադատության նախարարության կողմից առաջարկվող նման մասնագիտացված դատարանի անհրաժեշտությունը և դրա համար նախատեսվող մեծ ֆինանսական միջոցների տրամադրումը պետք է հիմնավորվեն ծանրակշիռ փաստերով, ինչը Նախագծերի փաթեթում բացակայում է:
- Նախագծերի փաթեթով հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար առաջարկվում է սահմանել շուրջ երկու անգամ ավելի բարձր աշխատավարձ, քան նախատեսված է մնացած առյանների դատավորների, անգամ նույն գործերը վերաքննության և վճռաբեկության կարգով քննող դատավորների և նույնիսկ՝ Սահմանադրական դատարանի դատավորի համար, ինչը

Խնդրահարույց է Սահմանադրությամբ նախատեսված դատավորի կարգավիճակի միասնականության, վարձատրությանը ներկայացվող պահանջների և ընդհանուր առմամբ՝ իրավական պետության տեսանկյունից:

- Նախագծերի փաթեթում ընդգծելով հակակոռուպցիոն դատարանի դատավորի բարձր պատասխանատվությունը՝ վերջինիս համար նախատեսվել է բարձր աշխատավարձ, միաժամանակ, սակայն, նույն դատավորի համար չի նախատեսվել մասնագիտական ավելի բարձր պահանջներ, որի առկայության դեպքում միայն հնարավոր կլիներ ապահովել բարձր պատասխանատվություն պահանջող աշխատանքի պատշաճ իրականացումը:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանին ընդդատյա են լինելու արդեն իսկ մոտավոր հայտնի շրջանակի գործեր, ինչպես նաև որոշ դեպքերում առկա է որոշակի խումբ անձանց թիրախավորում, կարող է ողջամիտ կասկած առաջանալ նշանակվող դատավորների կողմից արդեն իսկ կանխակալ վերաբերմունք ունենալու մասին, ինչը վտանգում է արդար դատաքննության սահմանադրական իրավունքը:
- Հակակոռուպցիոն դատարանները չեն կարող դիտարկվել որպես կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ գործիք, որը տալիս է բոլոր խնդիրների լուծումը: Նման դատարանները կարող են արդյունավետ լինել միայն ամբողջ իրավապահ համակարգի արդյունավետ աշխատանքի դեպքում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: